


Հավելված

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**

**ՌԻՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ.**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է համայնքի ղեկավար՝ **Հ.Սահակյանը**



Հաստատվել է համայնքի ավագանու 19.12.2016թ. թիվ՝ 36 -Ն որոշմամբ

2016թ., գ.Ռինդ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ .....	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	12
4. ՀՀՄ ֆինանսավորում .....	18
5. ՀՀՄ մոնիթորինգ.....	19

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ողջույնի խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը ներկայացրեց գալիք տարիներին համայնքի զարգացման ուղղությունները, որը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության, առկա խնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, մարդկային ռեսուրսների գնահատման ամբողջություն, որն էլ հնարավորություն է տալիս ռազմավարական քաղաքականությանը իրականացնել համայնքի բյուջետավորման արդյունավետ և նպատակային գործընթացը:

Գալիք տարիներին համայնքի զարգացման ուղղությունները են՝

1. Մանկապարտեզի կապիտալ վերանորոգում

2. Համայնքի գազաֆիկացում

3. Անավարտ կոյուղագծի շինարարական աշխատանքների վերսկսում

4. Փառքի պուրակի ընդլայնում և կանաչապատում

5. Մշակույթի տան հիմնանորոգում

6. Ոռոգման համակարգերի բարելավում

7. Երիտասարդական կենտրոնի հիմնում

Ծրագրերի իրականացման արդյունքում կունենանք բարեկարգ և հարմարավետ միջավայր ինչպես համայնքի բնակիչների, այնպես էլ համայնք այցելող հյուրերի, գրասաշրջիկների համար: Համայնքը պատրաստ է գործարարության և ներդրումների համար ստեղծել բարենպաստ պայմաններ:

Համայնքը համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նորանոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում է <<Որդեգրիր մի գյուղ>> ծրագրի, <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի, <<Գյուղի զարգացման ԱՐԴԻ նախաձեռնության >> ծրագրի հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վայոց ձորի մարզի Ռինդ համայնքը ունի 1551 բնակիչ, հիմնական զբաղվածությունը անասնապահությունը և գյուղատնտեսությունն է: Հեռավորությունը մարզկենտրոնից 25 կմ է, ծովի մակարդակից բարձրությունը 1200-1300 մետր է: Ներկայիս գյուղատեղը հիմնվել է 1967 թվականին: Համայնքը հայտնի է Ռինդի գինիով, դեղձով, ծիրանով, համեղ բանջար-բոստանային կուլտուրաներով և կաթնամթերքով, յուրահատուկ հյուրասիրությամբ, աշխատասիրությամբ, համերաշխությամբ, պատմական անցյալով և հայտնի մարդկանցով: Յուրաքանչյուր տարի հոկտեմբեր ամսին նշվում է գյուղի տոներ:

#### Համայնքի զբաղեցրած տարածքը

• Համայնքի վարչական տարածքը	4500.07 հա, որից
• Վարելահողեր	333.5 հա
• Խոտհարք	49.38 հա
• Արոտավայրեր	1121.46 հա
• Անօգտագործելի հողեր	2729.09 հա
• Այլ նշանակության	118.41 հա
• Տնամերձ հողեր	148.23 հա
• մեկ հողաբաժնի չափը	0.65 հա


Համայնքում կա 298 առանձնատուն, 31400 հազ.քմ. բնակ. տարածքով :

Բնակչության սեռատարիքային սանդղակ

Ըստ տարեթվի	Բնակչության ընդհանուր թիվը	0-15 տարեկան		16-62 տարեկան		63 և բարձր	
		արական	իգական	արական	իգական	արական	իգական
2017							
2018							
2019							
2020							
2021							

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 34642,2 հազար դրամ, որից սեփական եկամուտները՝ 7717,6 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են. Զորահ զինու գործարանը՝ որի արտադրանքը 2012 թվականի համաշխարային զինու համտես մրցույթում գտնվել է լավագույն տասնյակում, 5 մանրածախ վաճառքի կետեր :

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում տեղական շուկաներում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 148 (2016թ.տվյալներով) աշակերտներ: Դպրոցում գործում է նախադպրոցական կրթական ծառայություն 5 տարեկան երեխաների համար, որոնց թիվը 2016 թ.-ին կազմում է թվով 16 երեխա :

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը - 56 , թոշակառուների ընդհանուր թիվը - 221 :

### 2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ և իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1. Մանկապարտեզի կապիտալ վերանորոգում
2. Համայնքի գազաֆիկացում
3. Անավարտ կոյուղագծի շինարարական աշխատանքների վերսկսում
4. Փառքի պուրակի ընդլայնում և կանաչապատում
5. Մշակույթի տան հիմնանորոգում
6. Ոռոգման համակարգերի բարելավում
7. Երիտասարդական կենտրոնի հիմնում


Համայնքը համագործակցել և առաջիկայում շարունակելու է համագործակցել «Որդեգրիր մի գյուղ» ծրագրի , «Ուղղակարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի, «Գյուղի զարգացման ԱՐԴԻ նախաձեռնության » ծրագրի հետ և համայնքում իրականացնել նորանոր ծրագրեր:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:


### 2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող

դրտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների մեջ սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են: Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 6300,0 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 7717,6 հազար դրամ:



Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների և անհատների աջակցությունը:

## 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ռինդ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ հատկապես դեղձի, խաղողի, ծիրանի, և այլ պտուղների մշակությամբ, որը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է նաև աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքի հիմնական խոչընդոտներն են՝ գլոբալ տաքացումը, ցրտահարությունը, կարկտահարությունը, որոնց դեմ համայնքը ի գորու չէ պայքարել:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է որովհետև համայնքի վարչական տարածքով է անցնում Իրան-Հայաստան գազատարը:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը ունի վերանորոգման կարիք:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

1. Մանկապարտեզի կապիտալ վերանորոգում

2. Համայնքի գազաֆիկացում

3. Անավարտ կոյուղագծի շինարարական աշխատանքների վերսկսում

4. Փառքի պուրակի ընդլայնում և կանաչապատում

5. Մշակույթի տան հիմնանորոգում




6. Ոռոգման համակարգերի բարեկարգում

7. Երիտասարդական կենտրոնի հիմնում

Վերնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների և անհատ բարերարների աջակցությունը:

### 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՅՀՍ) վերլուծություն



### **3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ**

#### **3.1 Համայնքի զարգացման տեսլականը**

Համայնքի զարգացման տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր և միջին բիզնեսներով զբաղվող համայնք, որտեղ բնակիչները կունենան զբաղավածություն, երիտասարդները՝ մեծ հետաքրքրություն : Ղրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

#### **3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում**

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

##### **ԾՐԱԳԻՐ 1**

##### **ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ :**

Համայնքի ազգաբնակչության կրթության բարելավման, ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակչության համար կարևոր նշանակություն ունի մանկապարտեզի կապիտալ վերանորոգման խնդիրը: Կատեղծվի նոր աշխատատեղեր:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 120 մլն ՀՀ դրամ, որն ակնկալվում է իրականացնել պետական միջոցների և համայնքի ներդրմամբ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել առաջիկա տարիների ընթացքում:

## **ԾՐԱԳԻՐ 2**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ:**

Համայնքի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում թե՛ ներդրողների և թե՛ ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում են կանաչ տարածքներ: Ծրագիրը իրականացմամբ կբարելավվի ազգաբնակչության կենցաղային պայմանները: Նախատեսվում է շրջակա 5 համայնքների հետ համատեղ հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև ,որի նախնական մոտավոր արժեքը կարող է կազմել մինչև 1,2 մլրդ դրամ :

## **ԾՐԱԳԻՐ 3**

### **ԱՆԱՎԱՐՏ ԿՈՑՈՒՂԱԳԾԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐՄԿՍՈՒՄ:**

Համայնքում կիսավարտ կոյուղագիծը , որը պետք է սպասարկեր բուժկետը , դպրոցը ,մանկապարտեզը և 14-րդ փողոցի տները, անհրաժեշտ է շատ մոտ ապագայում շինարարությունը հասցնել ավարտին: Առկա է 34մլն. դրամի կոյուղագծի անավարտ հատվածի նախահաշիվը: Ծրագիրը ավարտից հետո բուժկետը, դպրոցը, մանկապարտեզը կունենան կոյուղի, ինչպես նաև կբարելավվի համայնքի ամենախիտ բնակեցված 14-րդ թաղամասի կենցաղային պայմանները: Այն նախատեսվում է իրականացնել ՀՀ պետ բյուջեի հաշվին:

## **ԾՐԱԳԻՐ 4**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱՌՔԻ ՊՈՒՐԱԿԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ և ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ :**

Համայնքի կենտրոնում է գտնվում Փառքի Պուրակը , այնտեղ տեղադրված է Հայրենական Մեծ Պատերազմի , Եղեռնի և Արցախի պատերազմին նվիրված հուշակոթողներ , իսկ 2016 թվականին ՀՀ անկախության 25 ամյակի կապակցությամբ տեղադրվեցին հին գյուղի հուշարձան աղբյուրը և մանկական կառուսել, ճոճանակներ , նստարաններ ու զբոսարան: Տարածքը զբաղեցնում է 0.2 հա, այն ամբողջությամբ

կանաչապատված է և միակը բնակչության համար, որպես զբոսավայր : Փառքի Պուրակի տարածքը կարիք ունի ընդլայնան և կանաչապատման ,որի համար կպահանջվի 15 մլն դրամ՝ ապահովելով ազգաբնակչության կուլտուրական հանգիստը, զբոսաշրջության համար, որպես տսարժան վայր: Ծրագիրը իրականություն կդառնա համայնքի միջոցներով և դոնոսներ օժանդակությամբ:

#### **ԾՐԱԳԻՐ 5**

##### **ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ:**

Մմակույթի տանն է տեղակայված համայնքապետարանը , գրադարանը , գործում է ազգագրական պարի խումբ : Մշակույթի տունը շահագործումից ի վեր բացի տանիքից չի վերանորոգվել: Ներկայումս այն ունի վերանորոգման կարիք , որի արդյունքում կունենանք վերանորոգված բարեկարգ մշակույթի տուն , կբացվեն նոր խմբակներ , կստեղծվեն աշխատատեղեր , համայնքում կաշխուժնա մշակույթային կյանքը : Ծրագրի իրագործման համար կպահանջվի 120 մլն դրամ, իրականացումը ակնկալվում է ՀՀ կառավարության միջոցներով :

#### **ԾՐԱԳԻՐ 6**

##### **ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ:**

Համայնքի տարածքում առկա են տասյակ հեկտարներ բերի վարելահողեր , սակայն ոռոգման ջրագծերի բացակայության պատճառով դառնել են ցածր բերքտվության հողեր : Կառուցելով ընդհանուր առմամբ 3-4 կմ փոքր ոռոգման ջրագծեր հնարավոր կլինի ոռոգելի դարձնել այդ հողատարածքները , որոնց շնորհիվ կմշակվեն լայն պահանջարկ ունեցող մրգերի տեսակներ , կստեղծվեն նոր աշխատատեղեր , կմեղմվի բնակչության սոցիալական վիճակը, կկանխվի արտագաղթը : Ծրագրի իրականացման համար նախնական հաշվարկով կպահանջվի 30 մլն դրամ՝ ֆինասավորման աղբյուրը միջազգային դոնոր կազմակերպություններ :

#### **ԾՐԱԳԻՐ 7**

##### **ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ:**

Համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծումը, կունենա մի քանի դրական կողմեր,

այն կդառնա հավաքատեղի համայնքի ակտիվ և նախաձեռնող երիտասարդների համար, որոնք կնախաձեռնեն և կհամախմբեն համայնքի երիտասարդությանը:

Կենտրոնում կկազմակերպվեն սեմինար-քննարկումներ տարբեր թեմաներով, հատկապես համայնքային խնդիրների և դրանց լուծման համար միջոցներ հայթհայթելու վերաբերյալ:

Կենտրոնում տեղի կունենան հանդիպումներ միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ովքեր կցանկանան համագործակցել երիտասարդների հետ:

Կկազմակերպվեն մրցույթներ հարևան համայնքի երիտասարդների մասնակցությամբ:

Ծրագիրը նախատեսվում է կյանքի կոչել միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, համայնքը պատրաստակամ է իր մասով կատարել ներդրումներ:

Երիտասարդական կենտրոնի հետագա աշխատանքը նախատեսվում է իրականացնել գրանտային ծրագրերով և որոշ ծրագրերի դեպքում համայնքային ֆինանսավորմամբ:

#### **ՑՆԱՍՏՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**


Նախատեսվում է համայնքում զարգացնել գինեգործությունը, զբոսաշրջությունը, մրգային օդիների արտադրությունը, անասնապահությունը՝ նպաստելով ազգաբնակչության սոցիալիական վիճակի բարելավմանը: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է համագործակցել ինչպես պետական, այնպես էլ դոնոր կազմակերպությունների հետ: Նախատեսվում է նաև զարգացնել առողջապահության ոլորտը:

#### **4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի և աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:



Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

## 5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է :

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ

յուաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: